



ՄԻ ՎԱՎԵՐԱԳԻՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) «Զանազան հեղինակների արխիվ» կոչված արխիվային ֆոնդում հանդիպեցինք Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական, հնում Գումայրի-Գյումրի) քաղաքի հայկական եկեղեցիների վերաբերյալ գրված անհեղինակ ձեռագիր մի գրվածքի և ձեռագրի միջոցով պարզեցինք, որ դա Էջմիածնի միաբանության անդամ, Շիրակի թեմի փոխանորդ, հետագայում թեմակալ, Արտակ եպիսկոպոս Սմբատյանի (1876—1937 թթ. ?) գրվածքն է, որը վերաբերում է Ալեքսանդրապոլ քաղաքի չորս եկեղեցիների հիմնադրման և դրանց կառուցման ու ավարտման պատմությանը:

Հայտնի է, որ 1828—1829 թվականների ոռո-թորքական պատերազմից հետո, 1829 թվականի սեպտեմբերի 2-ին կնքած Ադրիանապոլի հաշտության պայմանագրի համաձայն, ոռոսները իրենց գրաված Կարսի, Արդահանի, Էրզրումի և Բալազետի մարզերը վերադարձրին թուրքերին և հիշյալ մարզերի հայ բնակչության ցանկությամբ և ոռոս կառավարության համաձայնությամբ գաղթականություն կազմակերպվեց Ախալցխա, Ախալքալաք և Գյումրի գյուղաքաղաքներում, նրանց շրջակա գյուղերում և այլ վայրերում: Գյումրիում բնակություն հաստատած հայ գաղթականները այդտեղ կառուցում են սուրբ Աստվածածին անունով փայտածածկ եկեղեցի, որը 1881 թվականին փլվում է, որի տեղը հետագայում, երեք տարվա ընթացքում, հայ նշանավոր վարպետների ձեռքով, 1890 թվականին, կառուցում են քարաշեն ներկայիս հռչակապ եկե-

ղեցին և նրա մեջն են դնում «Եօթվիրաց» ս. Աստվածածնի պատկերը, որը Հասանդալայի ս. Աստվածածին հռչակավոր վանքի սեփականությունն է եղել և տեղի հայ բնակչության գաղթելու ժամանակ այդ պատկերը հիշյալ վանքի վանահայր Պողոս վարդապետ Զանաթյանը իր հետ տանում և 1832 թվականին Դանիլջայի Մարմաշեն վանքում է դնում, որն, ըստ ավանդության, Դուկաս ավետարանիչի (մ. թ. 1-ին դար) նկարածն է: Այդ նկարը հետո տեղափոխում են Հառիճի վանք: Ներսես Աշտարակեցի (1770—1857 թթ.) կաթողիկոսի պահանջով այդ նկարը 1851 թ. տարվում է Էջմիածին, իսկ 1852 թվականին Ալեքսանդրապոլի բնակիչների պահանջով տեղափոխվում է Ալեքսանդրապոլ և դրվում ս. Աստվածածին (Յոթվերք) եկեղեցում, ուր պահվում է մինչև այսօր: Ս. Աստվածածին եկեղեցում դրված «Եօթվիրաց» պատկերից ստացված եկամուտի մեկ երրորդը հատկացվել է Հառիճի վանական դպրոցի պահպանությանը մինչև 1918 թվականը, թուրքերի արշավանքը: Արտակ եպիսկոպոս Սմբատյանը հիշյալ գրվածքում «Եօթվիրաց» պատկերի անվան առաջանալու պատմությունը բացատրելու համար, չորս ավետարանիչներից յոթ բնաբան է մեջ բերել՝ Աստվածածնի արտում յոթ սուր ցցվելու, յոթ վերք ստանալու մասին:

Արտակ եպիսկոպոս Սմբատյանը գրվածքում զգալի տեղ է հատկացրել Ալեքսանդրապոլի (Լենինականի) ս. Փրկիչ եկեղեցու կառուցման պատմությանը: Այդ եկեղեցին հիմնադրվել է 1859 թվականին և կառուցվել միջնադարյան հայ ճարտարապետության զարդերից մեկի՝ Անիի Մայր եկե-

դեցու (կաթողիկե, 10-րդ դար) անան-
թյամբ ու ավարտվել 1875 թվականին: Ե-
կեղեցին կառուցվել է առանց անորոշապե-
տի և առանց հատակագծի: Եկեղեցին կա-
ռուցող վարպետները՝ Ծաթոշնիկով ուստա
Պապոն, Անտիկեան Թադևոսը, Գևորգյան
(Հովհաննես) և Կանցունց Խաչոն, նաև ու-
րիշները հաճախ Ալեքսանդրապոլից կառու-
քերով մեկնել են Անի, հայել Անիի Մայր ե-
կեղեցու կառուցվածքին, վերադարձել և շա-

րունակել ա. Փրկիչ եկեղեցու կառուցումն ու
արդյապես ավարտել այն:

Արտակ եպիսկոպոս Սմբատյանի գրված-
քում խոսք կա նաև 1858 թվականին հիմնա-
դրված և 1870 թվականին ավարտված ա.
Նշան եկեղեցու կառուցման և ավարտման
թվականները չնշված ա. Լուսավորիչ եկեղե-
ցու մասին:

ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱԴԱՄՅԱՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ Ա. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

1829—30 թվականին Բասենից և Կարսից
գաղթում են 14.000 ընտանիք (90.000
շունչ) Չախալյան (Խաժակյան) Ստեփան
արքեպիսկոպոսի առաջնորդությամբ*, և
Գյումրիի մոտ հիմնում են Աղեքսանդրապոլ
քաղաքը Աղեքսանդրա թագուհու անվամբ**:
Նոր գաղթած ժողովուրդը հիմնում է նաև
ա. Աստվածածին եկեղեցին հասարակ շեն-
քով և փայտածածկ:

Գյումրի գյուղն էլ ուներ յուր եկեղեցին ու
Աստվածածին անունով եկեղեցին, որը ետո
1882 թվին վերանորոգվելով վերակոչվել
է ա. Լուսավորիչ:

Քաղաքի ա. Աստվածածին եկեղեցին
1881 թվին փլվում է ծածկը, տեղ Մարտիրոս
քահանա Տեր Պողոսյանի ջանքերով ու աշ-
խատությամբ և աշխատակից հոգաբարձու-
թյամբ Գևորգ Խոյեցյանի, ուստա Մանուկի
(դուրգար), ուստա Աղաքաբի (դուրգար)
երեք տարում շինել են և 1890 թվականին
օծել տվել Սուքիաս եպիսկոպոս Պարզյանի
ձեռքով:

* Անհրաժեշտ ենք համարում տալ հետևյալ պար-
զաբանումը: 1829—1830 թվականներին Էրզրումից
գաղթել են 7298, Կարսից 2467, Բալազետից 4215 և
Արդահանից 67 ընտանիք, 90 կամ 100 հազար անձ-
նավորություններ և բնակություն են հաստատել գլու-
խավորապես Ախալցխա, Ախալքալսկ, Գյումրի
(Ալեքսանդրապոլ) բնակավայրերում և նրանց շըր-
ջանների գյուղերում: Գաղթականների հոգևոր ա-
ռաջնորդներն եղել են Էրզրումի հայոց հոգևոր ա-
ռաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը և Կարսի հա-
յոց հոգևոր առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսը:

** Կարևոր ենք համարում հիշել, որ Գյումրի
(Կումայրի) քաղաքի նոր անվանակոչման մասին կա
նաև հետևյալ բացատրությունը. ուսական Նիկո-
լայ 1-ին կայսրը 1837 թվականի հոկտեմբերի 4-ին
գալիս է Գյումրի, ուր մույն օրը հիմնադրվում է սուրբ
Ալեքսանդր անունով ուսական եկեղեցին: Կայսրը
հրամայում է Գյումրի քաղաքը վերանվանել Ալեք-
սանդրապոլ:

1924 թվականին քաղաքը վերանվանվում է Լևոնի-
ական:

Ծիճող վարպետները եղել են Թորանենց
Մկրտիչը, Մուրադենց Խաչատուրը և Գեո-
րգյենց Հովհաննեսը:

Ա. Աստվածածին եկեղեցում է դրված
«Եօթվիրաց» ա. Աստվածածնին պատկերը,
որը Հասանդալայի ա. Աստվածածին հռչա-
կավոր վանքի վանահայր և Բասենի ա-
ռաջնորդ Պողոս վարդ. Ջանաթյանը յուր
հետ բերել էր և 1832 թվին Ղանիշի Մար-
մաշեն վանքում դրել այդ պատկերը, որ ըստ
ավանդության Ղուկաս ավետարանչի նկա-
րածն է:

Հատիճայի վանքի վանահայր Ստեփան
արքեպիսկոպոսը հաջողացնում է «Եօթվի-
րաց» պատկերը տեղափոխել Ղփչաղ Հատի-
ճայի վանք:

1851 թվին Ներսես Ե կաթողիկոսը հի-
վանդ լինելով տանել է տալիս պատկերը
Էջմիածին աղոթելու համար, մնում է այն-
տեղ մի տարի, ապա Աղեքսանդրապոլի ժո-
ղովրդի դիմումներին զիջելով 1852 թվին
վերադարձնում են պատկերը և դնում ա.
Աստվածածին եկեղեցում:

1860 թվի նոյեմբերի 15-ին Մատթեոս Ա.
կաթողիկոսը կոնդակով այդ պատկերի
արդյանց մեկ երրորդը հատկացնում է Հա-
տիճայի վանական դպրոցի պահպանությա-
նը, որը ստացել է հոգաբարձությունը մինչև
1918 թվականը, մինչև տաճիկների արշա-
վանքը:

«Եօթվիրաց» պատկերի ա. Աստվածածնի
սրտում յոթը սուր կա ցցած, որ վերցրած են
հետևյալ 7 խոսքերից:

1. «Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն գինչ
գործեն [Ղուկաս ավետարանիչ, ԻԳ 34].
2. Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՛ր թո-
ղէր զիս [Մարկոս, ԺԵ 34].
3. Այսօր ընդ իս իցես ի դրախտին [Ղու-
կաս, ԻԳ 43].
4. Ահա մայր քո, ահա որդի քո [Մատթեոս,
ԺԲ 47].
5. Ծարաւի եմ [Հովհաննես, ԺԹ 28].
6. Ամենայն ինչ կատարեալ է [Հովհան-
նես, ԺԹ 30].

7. Հայր ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ
[Դուկաս, ԻԳ. 46]:

*
*
*

Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Այս եկեղեցին հիմնված է 1859 թվին Անիի Մայր եկեղեցու հատակագծի և շինվածքի ձևով: Երբ լուսամուտներին է հասնում շինվածքը 1865 թվին կառավարչությունը դադարեցնում է: Ապա տեղի Հովսեփ քահանա Կոստանյանի ջանքերով 1867-ին նորից վերակալում է շինությունը և 1875-ին վերջանալով 1876-ին օծվում է Սուրբաս եպիսկոպոս Պարզյանի ձեռքով:

Եկեղեցին շինող գլխավոր վարպետները եղել են Ծաբոշնիկով ուստա Պապոն, Անտիկենց Թադևոսը, Գևորգ (Հովհաննեսը) և Կանցոնց Խաչոն: Զանգակատան և զմբեթի խաչը լուր տեղն է դրել ուստա Մանուկը «Արտար» մականունով: Եկեղեցին շինել են առանց ճարտարապետի և առանց հատակագիծ կազմելու, և՛ սակայն շենքը հիացմունքի առարկա է:

*
*
*

Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Այս եկեղեցու հիմքը ձգված է 1858 թվին

և վերջացել է շենքը 1870 թվին և օծվել է Արել արքեպիսկոպոսի ձեռքով: Եկեղեցին շինվել է Իշխան Ղահրաման Դավթյան երկայնաքաղով Արղությանի նվիրած 2000 ոտքի գումարով: Վերակացուներ եղել են դյուզբյանցի տեղի Անդոնը և Մկրտիչ Զանլաթյանը, գլխավոր վարպետ եղել է Աղապապ Վահրադյանը: Իշխանը նորից տալիս է 2200 ոտքի:

*
*
*

Ս. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

Այս եկեղեցին Գյումրի գյուղի եկեղեցին է ս. Աստվածածին անունով, որը 1880—83 թվականը վերանորոգվելով, վերակոչվել է ս. Լուսավորիչ, որովհետև ս. Աստվածածին անունով արդեն քաղաքի եկեղեցին կար: Օծել [է] Գևորգ եպիսկոպոս Սուրենյանը (այժմ կաթողիկոս):

Արտակ եպիսկոպոս Սմբատյան

(Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), Զանազան հեղինակների արխիվ, թղթ. № 63, վավ. № 28):

